ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՄԻՏՔ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՌ.12:1-2

1 Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որ ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը: 2 Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը:

- ***Երկու շատ կարևոր բան է տեղի ունենում, երբ դու ապրում ես քո մտքի նորոգությամբ:***

  1. ***Ձեր սերն ու երկրպագությունը Հիսուսի հանդեպ դառնում են իրական:***

     Ղուկաս 10:27 – Նա պատասխանեց և ասաց. Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ զորությամբ ու քո ամբողջ մտքով (Բ Օր. 6.5) և քո մերձավորին, ինչպես քո անձը (Ղևտ. 19.18):

  2. ***Ի՞նչ է Աստծո կամքը իմ կյանքի համար:***

     Հռ. 8:28-29 – 28 Բայց գիտենք, որ ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են նրա կամքով: 29 Որովհետև նրանց, ում սկզբում ճանաչեց, նախասահմանեց կերպարանակից լինել իր Որդու պատկերին, որպեսզի նա անդրանիկը լինի բազում եղբայրների մեջ: 30 Եվ որոնց նախասահմանեց, նրանց նաև կանչեց, որոնց որ կանչեց, նրանց նաև արդարացրեց, իսկ որոնց արդարացրեց, նրանց նաև փառավորեց:

     Metamorphoō 4x – Փոխվել մեկ այլ ձևի, փոխակերպվել, կերպարանափոխվել:

     Մատթեոս 17:2 – Եվ նրանց առաջ այլակերպվեց. նրա դեմքն արեգակի պես փայլեց, իսկ զգեստները լույսի պես սպիտակ դարձան:

     2 Կոր. 3:18 - Բայց մենք ամենս՝ բաց երեսով Տիրոջ փառքն ինչպէս հայելու մէջ տեսնելով՝ նոյն պատկերի նման կերպարանափոխվում ենք փառքից դէպի փառք, ինչպէս թէ Տիրոջ Հոգուց:

- ***Աստծո կամքը քո կյանքի համար այն է, որ վերափոխվե՛ք Հիսուսի պատկերի պես:***

I. ՄԻՏՔԸ ՉԱՐԻ ՈՒ ԲԱՐՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱԴԱՇՏՆ Է:

Հռ. 8:5-6 - 5 Որովհետեւ մարմնաւոր լինողները մարմնի բաներն են մտածում. իսկ հոգեւոր լինողները՝ հոգու բաները: 6 Որովհետեւ մարմնի խորհուրդը մահ է. եւ հոգու խորհուրդը՝ կեանք եւ խաղաղութիւն:

- *Մարդը կարող է օրական մոտ 60,000 մտքեր ունենալ, և դրանց 90%-ը կրկնվող են:*
- *Տարեկան քսաներկու միլիոն մտքեր, և ահա թե որքան որոշում ենք մենք ընդունում տարեկան:*

- *Մեր մտքերի 75%-ը բացասական են:*

  - *Ցանկացած միտք որը գերի չենք բռնում, այն մեզ գերի կբռնի:*

    Բ Կոր. 10.3-5 – 3 թէպէտեւ մարմնի մէջ ենք ապրում, բայց մարմնաւորապէս չենք զինվորություն անում: 4 Որովհետեւ մեր զինվորության զէնքերը մարմնավոր չե, այլ Աստուծով զօրավոր, բերդեր ,ամրություններ, բարձրությունե, քանդելու. խորհուրդներ ենք քանդում, 5 Եւ ամեն բարձրություն՝ որ գոռոզանում է Աստուծո գիտության դէմ. եւ գերի ենք բռնում ամեն միտք Քրիստոսին ***<u>հնազանդեցնելու</u>*** *համար:*

    Հակ. 4:7 - 7 Արդ ***<u>հնազանդեցէք</u>*** *Աստուծուն, հակառակ կացէք սատանային, եւ նա կ'փախչի ձեզանից:*

  - *Կապանքը – չնորոգված մտքերի բնակավայրն է:*

  - *Ամեն մի մտքի դիմաց պետք է Ճշմարտությունը խոսել:*

    Հովհաննես 8:32 – Կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի ձեզ:

- ***Մենք սատանայի դեմ պայքարում ենք Աստծո ճշմարտությունով, իսկ ճշմարտության աղբյուրն Աստվածաշունչն է:***

  Եփ. 6:17 – Եւ փրկության սաղավարտն առէք, եւ Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է:

- ***Դժվար է հավատալ այն զենքերին որոնք անտեսանելի են:***

  Եբր. 4:12 - 12 Որովհետեւ Աստուծո խօսքը կենդանի է եւ զօրավոր եւ ամեն երկսայրի սուրից ավելի կտրուկ է, եւ թափանցում է մինչեւ շունչի եւ ոգու եւ հոդուածների եւ ծուծի բաժանվելը. եւ քննող է սրտի մտքերը եւ խորհուրդները:

II. ԹՈՒՅԼ ՄԻ ՏՎԵՔ, ՈՐ ԹՇՆԱՄԻՆ ԿԱՍԿԱԾԻ ՍԵՐՄԵՐ ՑԱՆԻ ՁԵՐ ՄՏՔՈՒՄ:

Ծնն. 3:1-6 - 1 Եւ օձը աւելի խորամանգ էր քան թէ դաշտի բոլոր գազանները, որ Եհովայ Աստուածն ստեղծել էր. Եւ կնոջն ասեց. Իրաւ Աստուած ասեց, որ Պարտէզի ոչ մի ծառիցը չուտէք: 2 Եւ կինն ասեց օձին. Պարտէզի ծառերի պտղիցն ուտում ենք. 3 Բայց այն ծառի պտղիցը որ պարտէզի մէջտեղն է, Աստուած ասեց, Մի ուտէք նորանից, եւ նորան մի դպչիք, որ չմեռնիք: 4 Եւ օձը կնոջն ասեց, Բնաւ չէք մեռնիլ: 5 Այլ Աստուած գիտէ, թէ այն օրը որ նորանից ուտէք, ձեր աչքերը կբացուին, եւ Աստուծոյ պէս կլինիք՝ բարին եւ չարը գիտացող:

6 Եւ կինը ***<u>տեսաւ</u>****, որ ծառը լաւ էր ուտելու համար, եւ թէ* ***<u>հաճելի էր աչքերին</u>****, եւ փափաքելի է ծառը նայելու համար, առաւ նորա պտղիցը եւ կերաւ, եւ իր հետ իր մարդին էլ տուաւ, եւ նա կերաւ:*

Թվոց 13:33-34 – Եվ նրանք իրենց հետախուզած երկրի մասին վատ լուրեր հաղորդեցին Իսրայելի որդիներին՝ ասելով. «Այն երկիրը, որի միջով անցանք հետախուզելու համար, իր բնակիչներին ուտող երկիր է: Նրա բոլոր բնակիչները, որ մենք տեսանք, բարձրահասակ մարդիկ են: Այնտեղ տեսանք հսկաներին՝ Ենակի որդիներին, որոնք հսկաներից են.
այնպես որ մենք մեր աչքին, ինչպես և նրանց աչքին մորեխների պես էինք»:

- ***Խնդիրը ոչ թե վախն է, դեպրեսիան, կիրքը, բարկությունը, քո կախյալությունը, քո անցյալը կամ _____, այլ քո մտածելակերպը դրա մասին:***

III. ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ ՎՐԱ ՄՏԱԾԵԼԸ ՄԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է, ՈՐՈՎ ՀԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ:

- ***Ահա թե ինչի վրա կարող ենք կենտրոնացնել մեր միտքը:***

  Կող. 3:1-2 – Արդ եթե Քրիստոսի հետ հարություն առաք, ապա փնտրեք այն, ինչ վերևում է, որտեղ Քրիստոսն է՝ Աստծու աջ կողմում նստած: Վերևում եղած բաների մասի՛ն մտածեք և ոչ թե այն, ինչ երկրի վրա է:

  Փիլիպպեցիս 4:8 – Այսուհետև, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ անարատ, ինչ որ սիրելի, ինչ որ բարեհամբավ, առաքինի և գովելի, այն մտածեք:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ